ՊԱՏԱՍԽԱՆ ՊՐՈՖ. ԳԱՐԵԳԻՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

ԻԱՖԱՅԵԼ ԻՇԽԱՆՅԱՆ

Պրոֆ. Գ. Պետրոսյանի «Անհայտ հեղինակի թվաբանության դասագրքի հեղինակման ժամանակը» հոդվածի մասին կարելի է ասել հետևյալը.

Գ. Պետրոսյանն ուզում է համոզել, որ «Արուեստ թվական է սայ» աշխատությունը գրվել է XV դ.։ Բայց համոզելու համար պետք են փաստեր, որպիսիք հեղինակը չունի։

Մենք ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի հրատարակած «Յուցակ ձեռագրաց»-ի գրել էինք, որ տվյալ ձեռագիրը XVII դ. ընդօրինակություն է։ Գ. Պետրոսյանը գրում է, որ ձեռագիրն ընդօրինակված է XVIII դ. (ըստ Յու. Վարդանյանի բանավոր ճշտման)։ Թող այդպես լինի, հնարավոր է, որ «Յուցակ ձեռագրաց»-ում XVII դ. վրիպակ է։ Բայց չէ՞ որ եթե ձեռագիրը, իրոք, XVIII դ. ընդօրինակություն է, ապա Գ. Պետրոսյանի գլխավոր փաստարկը՝ թվանշանների ձևերի խնդիրը, ավելի անհող է դառնում։ XVIII դ. ընդօրինակված ձեռագրում տառերի, թվանշանների, զարդերի ձևերը հենց XVIII դ. են դալիս։ Տառերն ու թվանշանները գրված են այն մարդու ձեռքով, ով XVIII դ. ընդօրինակել է, այսինքն՝ իր ձեռքով դրել է ձեռագիրը։ Եվ եթե ընդօրինակողը տվյալ երկի հեղինակը չէ, այլ ուրիշ մարդ է, կնշանակի ձեռագրի տառերն ու թվանշաններն այդ ուրիշ մարդունն են և ոչ թե հեղինակինը։ Գ. Պետրոսյանը գրում է, որ աշխատությունը XV դարում գրված լինելը հիմնավորելու հարցում «վճռական նշանակություն ունեցողը թվանշանների ձևն է»։ Բայց այդ թվանշաններն էլ, ահա, XVIII դարի են։ Գ. Պետրոսյանը մատը դնում է 4 թվանշանի գրության ձևի վրա։ Ահա ձեռագրից արտագրում եմ չորս թվանշանը՝

4 այսպիսի չորս հիմա էլ են գրում. գրադարանային ձեռագրի չորսն այդպիսին է։ Ձեռագրի գրիչը թվանշանի գլխիկը փոքր է արել, վատ է գրել։ Բայց այդպիսի փոքր գլխիկով չորս առաջ էլ, հիմա էլ որքան ուզեք կարելի է ցույց տալ ձեռագրերի մեջ, մասնավորապես գրադարանների ձեռագիր քարտարաններում։ Մարդ զարմանում է, ինչպե՞ս կարելի է ձեռագիր չորսի ձևով, նրա գլխիկով, այն էլ XVIII դ. գրված, որոշել, թե երբ է հեղինակվել աշխատությունը։ Կարելի է XVII, XVIII, XIX դդ. ձեռագրերից բերել այս ձեռագրում եղած բոլոր թվանշանների ձևերով գրված թվանշաններ (այստեղ միայն 2 թվանշանն է աղավաղված, մյուս թվանշանները սովորական են, այդպես հիմա էլ են գրում)։

Հեղինակը նշում է, որ իր մյուս փաստարկները «օժանդակ նշանակություն ունեն»։ Ո՛չ, օժանդակ նշանակություն էլ չունեն։ Եթե միլիոն բառը գործածվել է սկսած XIV դ. (որի հետ Գ. Պետրոսյանը լիովին համաձայն է) և գործածվում է նաև XX դ., կնշանակի որևէ աշխատություն, որի մեջ կա այդ բառը, հեղինակվել է XIV-ից մինչև XX դ. ներառյալ ընկած ժամանակամիջոցում, այսինքն, այո՛, ընկ. Պետրոսյան, XIII դ. հետո, մինչև մեր օրերն ընկած ժամանակամիջոցում։ Այստեղ ի՞նչ կա զարմանալու, որ դուք գրում եք, թե «որտեղից է վերցրել XIII դարը»։ Կամ եթե ա–օ զուգահեռ գրությունը եղել է XIII դ. սկսած մինչև XVIII դ. (նույնիսկ՝ մինչև XIX-ի կեսերը), ուրեմն դա ևս որևէ կապ չունի երկի հեղինակման դարը ճշտելու հետ, մանավանդ, որ այդ զուգահեռ գրությունը պատկանում է ձեռագիրը ընդօրինակողին։ Այն-

պես, որ սրանք օժանդակ նշանակություն էլ չունեն և առհասարակ փաստարկ չեն։ Նույնը վերաբերում է մյուս «օժանդակ փաստարկին», այն է, Գ. Պետրոսյանի խոսքով ասած՝ այբբենական համակարգից «տասնորդական դիրքային համակարգին» անցնելուն, այսինքն՝ հայկական տառ-թվանշաններից արաբական կոչվող թվանշաններին և թվարկման տասնորդական համակարգի անցնելուն։ Հարգելի հեղինակը գրում է, որ XVII դ. «Արհեստ համարողութեան» գրքում թվանշաններն արաբական են, ուրեմն այդ դարում նման թվանշաններով գրել են։ Էլ ի՞նչ կարիք կա բավական երկար դատողություններ անել հնդկական, արաբական համակարգերի ու նման բաների մասին, ապացուցելու համար, թե XV դ. են սկսել արաբական թվանշաններ օգտագործել, «անցում կատարել» դեպի «դիրքային համակարգը» և այլն։ Չէ որ դա հենց նշանակում է, որ XVII դ. էլ են գրել այդ կերպ։ Ի դեպ, ասենք, որ նույն XVII դ. հեղինակված՝ Կոստանդ Ջուղայեցու թվաբանության աշխարհաբար դասագրքում էլ տառային թվանշաններ են գործածված. ուրեմն այդ դարում և այս կա, և այն։ Ուստի այս փաստարկն էլ «օժանդակ» չէ, այլ ուղղակի փաստարկ չէ։

Երկու տեղ գրում է, որ դասագիրքը, «հատկապես երկրորդ մասը են-թարկվել է փոփոխության ու խմբագրման»։ Ինչի՞ց իմացաք, հարգելի պրոֆեսոր։ Դուք ոչ մի փաստ դրա համար չեք բերում։ Այս «փոփոխությունը» պետք է Գ. Պետրոսյանին այն բանի համար, որ ասի, թե դասագրքում XVII դ. չափ ու կշռի, առևտրական հարաբերությունների մասին գրվածները հետագայի ներմուծություններ են։ Բայց ասելը քիչ է, պետք է համոզել, այն էլ փաստերով։ Իսկ փաստը, իրողությունը այն է, որ ամբողջ դասագրքում առկա են XVII դ. չափումներ, մտածելակերպ, անցուդարձ։

Եվ այսպես, հեղինակը որևէ փաստ ու փաստարկ չունի տվյալ երկը XV դարում հեղինակված համարելու։ Որևէ արժեք չունի նաև այն, որ դասագրքի առաջին մասը, այսինքն՝ առաջաբանը գրված է գրաբար։ Ընկ. Պետրոսյանին պետք է հայտնի լինի, որ XVII դ. աշխարհաբար (նոր գրական հայերեն) հեղինակված գրքերում առաջաբանները գրվել են գրաբար. այդպիսիք են 1675-ի «Արհեստ համարողութեան», 1687-ի «Պարզաբանութիւն» աշխարհաբար երկերի և Հաջորդի առաջաբանները։ Ընդ որում, այս գրքերի առաջաբանները շատ ավելի կանոնավոր գրաբարով են գրված, քան խնդրո առարկա դրչագրինը։ Ըստ Գ. Պետրոսյանի ստացվում է այնպես, որ ստուգապես XVII դ. թվակիր այդ գրքերը նույնպես XV դ. պետք է լինեն և դեռ ավելի վաղ շրջանի, քանի որ դրանց առաջաբանները (առաջին մասը) շատ ավելի լավ գրաբարով են գրված, քան «Արուեստ թվական է սայ» երկի առաջաբանը (հեշտությամբ կաբելի է ցույց տալ, որ այս դասագրքի աղճատ գրաբարը հենց XVII դ. է)։

Այսպիսով, «Արուեստ թվական է սայ» երկի հեղինակման ժամանակը ընկ. Պետրոսյանը չի որոշել, այն մնում է բաց։ Մենք այդ ժամանակի մասին կարծիք ենք հայտնել ամենից առաջ ըստ երկի լեզվի, որ աշխարհաբարն է՝ 3-րդ կամ նոր հայերենը։ Մեզ հայտնի վաղ աշխարհաբարյան բոլոր երկերը գրված են XVII դ. (հիմնականում այդ դարի 40-ական թվականներից հետո) և XVIII-ում։ Այստեղից ենթադրություն ենք անում, որ «Արուեստ թվական է սայ» աշխարհարար երկն էլ բացառություն չի կարող լինել և ըստ իր աշխարհաբարի բնույթի պետք է հեղինակված լինի անպայման XVII դ.։ Այսօր հայագիտության մեջ աշխարհաբարի առաջին դարը համարվում է XVII-ը (Գ. Սեվակ, Ս. Ղազարյան, Գ. Ջահուկյան, Է. Աղայան, նվաստս և շատ ուրիշներ)։ Եվ սա հիմնավորված է բազում փաստերով։ Մեծարգո Գ. Պետրոսյանը գրում է. «Ռ. Իշխանյանը իր համար նախօրոք ստեղծել է մի կաղապար՝ XVII դարը»։ Հարգելի ընկ. Պետրոսյան, դա ես չեմ ստեղծել, դա այսօրվա գիտության դրությունն է, այն, որ, կրկնում եմ, XVII դ. առաջ աշխարհաբարով, ավելի ստույգ՝

---

1 Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 3443։

նոր գրական հայերենով կամ նրա ավելի բարբառային տարբերակով գրքեր չեն գրվել (եղել են աշխարհաբարի առանձին տարրեր, հատվածներ, բայց երկեր, թեկուզ փոքր, չեն գրվել մինչև XVII դ.)։

Եթե ընկ. Պետրոսյանը գտնի XVII դ. առաջ գրված որևէ աշխարհաբար (նոր գրական հայերեն) երկ, տողերիս հեղինակը հրաժարվում է XVII դարից, և խնդրո առարկա ձեռագիր երկը XVII դ. հեղինակված համարելուց։ Եվ եթե այդպիսի բան հայտնաբերի ընկ. Պետրոսյանը, ապա դա մեծ գյուտ կլինի հայագիտության մեջ։ Բայց բարեկամաբար խորհուրդ չէի տա որոնումներ անել, քանի որ նման որոնումներ շատերն են արել և շատ են արել, որից պարզվել է, որ նոր գրական հայերենը (աշխարհաբարը) իբրև գրավոր հաղորդակցության միջոց սկսել է գործածվել XVII դարից։ Ուրեմն և «Արուեստ թվական է սայ» աշխարհաբար (նոր գրական հայերեն) երկը XVII դ. առաջ գրված չի կարող լինել։ Սա ստույգ է։ Իսկ ինչու՞ ենք մենք ենթադրում, որ հատկապես XVII դ. է գրված, այլ ոչ թե, ասենք, XVIII-ում, դրա գլխավոր պատճառն էլ է լեզուն. գրված է միասնական աշխարհարարով (չկա արևմտահայերեն-արևելահայերեն բաժանումը, միաժամանակ և՛ արևմտահայերեն է, և՛ արևելահայերեն)։ Իսկ սա հատուկ է XVII դարին։ Եթե որևէ մեկն իբրև այս երկի հեղինակման ժամանակ առաջարկի XVIII դ. սկիզբը, ապա դրան առարկելը դուցե և դժվար կլինի, թեև ոչ անհնար։ Բայց սա այլ հարց է։

ОТВЕТ ПРОФ. ГАРЕГИНУ ПЕТРОСЯНУ

РАФАЕЛ ИШХАНЯН

Резюме

Рукописный учебник арифметики «Это искусство счисления» написан на новоармянском литературном языке. Ранее XVII в. этот язык не применялся, самые ранние его памятники относятся к середине или ко второй половине указанного столетия. Наименования всех мер в учебнике также относятся к XVII в. и не употреблялись в XV в. Главный аргумент Г. Петросяна—формы написания цифр, особенно цифры 4, на основании которого автор хочет отнести учебник к XV в., не состоятелен, ибо цифры в руколиси написаны рукою не автора учебника, а переписчика, рукопись же переписана в XVIII в. Кроме того, цифры рукописи имеют такие формы, которые применялись и в XV в. и в последующих веках, вплоть до нашего времени. Аргументы же побочные, как их называет автор статьи, такие, как употребление термина «миллион», параллельное употребление букв *о* и ш, а также применение арабских цифр и данной системы счисления не могут говорить в пользу XV в., ибо все это имело место и применялось и в последующих веках, особенно в XVII в. Все это говорит о том, что данный учебник на новоармянском языке был написан в XVII в., когда писались и другие учебники арифметики на том же языке и подобного типа.